ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 25. Հանձնաժողովի համագործակցությունը

1. Հանձնաժողովն օրենքով իրեն վերապահված լիազորություններն իրականացնելիս համագործակցում է Հայաստանի Հանրապետության, օտարերկրյա պետությունների պետական մարմինների, միջազգային և այլ կազմակերպությունների հետ, այդ թվում՝ հուշագրերի, համագործակցության մասին այլ համաձայնագրերի կնքման միջոցով:

2. Հանրային ծառայությունների ոլորտում գործող անձանց նկատմամբ տնտեսական մրցակցության գործառույթները ~~Մրցակցության պաշտպանության հանձնաժողովն~~ Մրցակցության եւ սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովն իրականացնում է հանձնաժողովի հետ համագործակցության սկզբունքի հիման վրա:

3. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց իրավասությունների սահմաններում օժանդակում են հանձնաժողովի լիազորությունների իրականացմանը:

4. Հանձնաժողովն իր իրավասությունների շրջանակում մասնակցում է հանրային ծառայությունների ոլորտին վերաբերող ծրագրերի, ռազմավարությունների մշակմանը, դրանց վերաբերյալ ներկայացնում է առաջարկություններ: